Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

G 39-K
391

Ադրբեջանի Գյուղատնտեսական Կոլեկտիվների Միություն
«Ա Զ Կ Ո Լ Խ Ո Զ Ց Ե Ն Տ Ր»

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## ԲԱՄԲԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

633.5
Ա-65

AZƏRNƏŞR

Բաքու—1931

Тип. „Кр. Восток"
Азполиграф ВСНХ.
Карантинная, 84.
Гл. 1767. Ст.-фор.—Б 6
Зак. № 3817. Тир. 1000.

633.5
Ա-65
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
24 SEP 2010

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## ԲԱՄԲԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

(ԿԱԶՄԵԼ Ե ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈԼԽՈԶՑԵՆՏՐԸ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈԼԽՈԶՑԵՆՏՐԻ ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Բոլշևիկյան առաջին կոլխոզային գարնան պրակտիկան ահագին նվաճումների հետ միասին՝ բաց է արել և վորոշ կոլխոզների աշխատանքում յեղած թերությունները։ Այդ թերությունները կայանում են հետևյալում.—լավ չեն պատրաստվել գարնանացանին, վաղորոք աշխատանքային պլան չի կազմվել, կոլխոզնիկների աշխատանքում լավ չեն դասավորել լծկան ուժերն ու ինվենտարը, լծկան անասունները քիչ են օգտագործվել, վատ է յեղել աշխատանքային դիսցիպլինան ու աշխատանքների վորակը։

Անցյալ գարնան առանձնապես խոշոր թերությունը, վոր պետք է վերացնել ինչ էլ լինի, այն է, վոր լայնորեն գործադրվել է յեկամուտն ու բերքը շնչի բաժանելու սկզբունքը. դա խոչընդոտ է հանդիսացել աշխատանքն ուղիղ կազմակերպելու և աշխատանքի արտադրողականությունն իրոք բարձրացնելու գործին։

Այդ թերությունները բոլշևիկյան յերկրորդ գարնանը վերացնելու համար՝ Կոլխոզցենտրը վորոշում է,

19 FEB 2013
19.122



1) Պարտավորեցնել կոլխոզներին՝ տարեկան արտադրական պլանի հիման վրա ճշգրիտ աշխատանքային պլան կազմել գարնան գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանի համար։ Պլանում պետք է նախատեսնել ցանքսի օրացույցային ժամկետները, կուլտուրաների դասավորման տեղը, ամենորյա պատվեր ներկայացնել պահանջվող քանակությամբ կոլխոզնիկների, քարշող ուժի և դրանց բաժանումն ըստ բրիգադների, ինչպես և պլանում նախատեսնել, թե աշխատանքի ժամանակ ինչքան կեր, սերմ և այլ բաներ են հարկավոր։

2) Աշխատանքային պլանը մշակում է կոլխոզի վարչությունը և կոլխոզային մասսաների կողմից լայն քննության է ենթարկվում կոլխոզնիկների արտադրական խորհրդակցություններում ու ընդհանուր ժողովներում։ Այդ ժողովներում ամենալուրջ կերպով ուշադրություն պետք է դարձնել աշխատանքըն ուղիղ բաշխելու, ավելորդ դես ու դեն ընկնելը վերացնելու, առանձին անդամներին ճշտիվ բեռնավորելու, աշխատանքային դիսցիպլինան բարձրացնելու, մեքենաները լրիվ բեռնավորելու, սոցմրցությունն ու հարվածայնությունը ծավալելու հարցերի վրա։ Աշխատանքային պլանի քննությունը պետք է դաշտ դուրս գալուց յերկու շաբաթ առաջ ավարտվի։

3) Յուրաքանչյուր կոլխոզ պետք է ներկա գարնանացանի կամպանիայում բամբակ ցանելու ամենամեծ տարածությունն, ցանքային պլանի կատարում և գերակատարում նախատեսնի, վորին հասնելու համար կոլխոզը պարտավոր է լրիվ ու ժամանակին կատարել հետևյալ աշխատանքները։

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
61943-67



## ՀՈՂԱՅՈՒՑՄԱՆ, ՀՈՂԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԲԱՄԲԱԿ ՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) հողացուցումներ կատարել ու գարնանը վարելու համար ջոկած խամ հողերի, բարձի թող արած հողերի, արածելու տեղերի ու խորհարքերի չափը վորոշել.

բ) բամբակ վարելու տեղն ու աշնան և գարնան ցելի տարածության չափը սահմանել՝ հետևելով, վոր բամբակի համար տրվի ամբողջական տարածություն։ Դրա հետ միասին հողամասեր տալ նշված չափով առվույտ և սիլոսային բույսեր ցանելու համար.

գ) ամբողջ կոլխոզային մասսայի մասնակցությամբ մանրամասնորեն քննել տարածության չափը՝ այդ տարածությունն ընդարձակելու հնարավորություններ գտնելու նպատակով, ինչպես և քննել բամբակը խնամելու, ժամանակին քաղհանելու և փխրեցնելու կարգը: Հողացուցումները կյանքի մեջ է մտցնում տնտեսությանը տեղյակ կոլխոզնիկների խումբը՝ հողաչափի ու գյուղատնտեսի օգնությամբ։

## ՎՈՌՈԳԵԼՈՒ ՑԱՆՑԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) մասնակցել գլխավոր ջրանցքը մաքրելու գործին.

բ) մաքրել հողամասի բոլոր վոռոգչական առուները.

գ) վոռոգչական մանր ցանցը մասերի բաժանելը նախապատրաստել.

գ) ջուրը բաժանելու կոնկրետ պլան կազմել.

ե) դաշտերը ջրելու ղեկավար ու ջրողների բրիգադ ջոկել.

զ) հողամասի վարագման ղեկավարը պետք է կապ հաստատի ջրային հանձնաժողովի հետ և ջրելու ժամկետներ ու հերթ նշանակի։

## ՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) հողամասը մաքրել թփերից, քարերից և այլն.

բ) հողամասը պլանավորել՝ ջրելու համար։

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) անհապաղ ստուգել դաշտային աշխատանքների ժամանակամիջոցին լծկան անասունների համար պահանջվող կերի հատուկ ֆոնդը.

բ) տեղական փորձի ու տնտեսական հնարավորությունների հիման վրա՝ լծկան անասուններին կերակրելու չափը սահմանել՝ թե մինչև ցանքը և թե ցանքսից հետո.

գ) կոլխոզ մտնող նոր տնտեսությունները մտնելու ժամանակ անհրաժեշտ քանակությամբ կեր են մտցնում՝ իրենց համայնացրած անասուններն աշխատանքի ժամանակ կերակրելու համար.

դ) ցանքսի ժամանակ անասունները կերակրելու, կեր հասցնելու, ջուր տալու հաստատուն կարգ սահմանել.

ե) անասունների կերը պահելու և բաժանելու համար պատասխանատու կոլխոզնիկներ ջոկել, նրանց պրեմիա սահմանելով կերը խնայողությամբ օգտագոր-



ծելու համար և տուգանում՝ կերակրելու ժամանակ կերը փչացնելու համար։

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) դաշտն աշխատանքի դուրս գալուց յերեք շաբաթ առաջ՝ լծկանները բաժանել ծանր աշխատանք կատարելու (հերկ, ցանք) և թեթև աշխատանք կատարելու (ցաքան և այլն) ընդունակների՝ հաշվի առնելով աշխատանքի բնույթը և անասունի ույժն ու կարողությունը.

բ) ցանքից յերկու շաբաթ առաջ անասունների կերակրելն ուժեղացվում է.

գ) բրիգադների միջից հատուկ ախոռապաններ ջոկել, նրանց վրա դնելով անասունների դրության ու խնամքի պատասխանատվությունը։ Աշխատանքի ժամանակ անասունների հետ վատ վարվելու պատժի չափը սահմանել.

դ) հմուտ կոլխոզնիկ ուղարկել տեղական անասնաբուժական կետը՝ սովորելու, թե ինչպես պետք է վարվել դեղորայքի հետ և առաջին օգնությունը հասցնել հիվանդացած անասուններին։

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՈՒ ԼԾԱՍԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) ստուգել, թե ինչպես է գնում ինվենտարի նորոգումն ու թե նորոգածը վորքան է պետքական աշխատանքի համար.

բ) նախորոք ապահովել ամեն մի լծկան բոլոր անհրաժեշտ լծասարքով (խամուտներ, լծափոկեր), թամբիկներ, սանձեր, աչքակալներ, լուծեր և այլն).

գ) լծասարքը նորոգելու գործը կազմակերպել՝ մոբիլիզացիայի յենթարկելով լծասարքագործներին (շորնիկներին).

դ) ապահովել լծասարք կարկատելը՝ դաշտում աշխատելիս.

յե) ցանքսից յերկու շաբաթ առաջ բրիգադներին բաժանել գյուղատնտեսական ինվենտարը, փոխադրական միջոցներն ու լծկանները՝ նայած աշխատանքը կատարելու համար պահանջվող ժամանակին: Բրիգադի համար, վորքան կարելի է, միատեսակ մեքենաներ ջոկել:

## ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ա) ժամանակին պարարտանյութ ստանալ ու հողը պարարտացնել մարտի 1-ից մինչև 20-ը՝ այդ գործը վերջացնելով մինչև արաթի սկիզբը.

բ) առանձին բրիգադներ ջոկել՝ պարարտանյութերը ցանելու համար.

գ) բրիգադի ղեկավարին հրահանգել ագրոկետաբում:

## ԲՐԻԳԱԴՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) դաշտը դուրս գալուց վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ բրիգադներ են կազմակերպվում.

բ) կոլխոզնիկների, լծկանների ու գյուղատնտեսական ինվենտարի քանակությունը սահմանվում է ամեն մի բրիգադում, նայած մշակման նորմայի, աշխատանքների ծավալին, ու գործը կատարելու համար նշանակված ժամանակին: Բրիգադներին թե հատուկ գործեր են հանձնարարվում (միայն հերկ, ցաքան), և թե խառն, նայած ցանքի հողամասի չափին, կայաններից ու մարդաբնակ տեղերից ունեցած հեռավորությանը.



գ) կոլխոզնիկները բրիգադների են բաժանվում՝ նայած իրենց վորակին և այս կամ այն գործին հմուտ լինելուն.

դ) աշխատանքներն սկսելուց յերկու շաբաթ առաջ բրիգադը հաստատուն առաջադրություններ է ստանում՝ աշխատանքի տեղի ու ժամանակի մասին տրված պատվերներով (նարյադ): Բրիգադի ստացած առաջադրությունները քննության են առնվում բրիգադների ընդհանուր ժողովում և բրիգադում յեղած յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի չափն է սահմանվում: Բրիգադը գործնական աշխատանքում պետք է ձգտի առաջադրությունը գերակատարելու՝ գործադրելով հանդիպական պլանների, սոցիալիստական մրցության ու հարվածայնության մեթոդները, իր վրա վերցնելով հաստատուն աշխատանքային պարտականություններ.

յե) կոլխոզների ժողովներում պետք է մանրամասնորեն մշակվեն յեկամուտներն ու բերքը բաժանելու կանոնները, վորպեսզի հետագայում յեկամուտն ըստ շնչի բաժանելու վոչ մի խոսք չլինի: Գարնանացանի իսկական հաջողության գրավական է հանդիսանում այն, վոր կոլխոզնիկները իսկապես իրականացնեն բերքը բաժանելու կանոնները, միմիայն կոլխոզնիկի ու նրա ընտանիքի կատարած աշխատանքի քանակության ու վորակի համաձայն.

զ) բոլոր դաշտային աշխատանքները գործարքով (սդելնի) են կատարվում: Ցանքից մի ամիս առաջ՝ կոլ-

գ) Լծասարքը նորոգելու գործը կազմակերպել՝ մոբիլիզացիայի յենթարկելով լծասարքագործներին (շորնիկներին).

դ) ապահովել լծասարք կարկատելը՝ դաշտում աշխատելիս.

յե) ցանքսից յերկու շաբաթ առաջ բրիգադներին բաժանել գյուղատնտեսական ինվենտարը, փոխադրական միջոցներն ու լծկանները՝ նայած աշխատանքը կատարելու համար պահանջվող ժամանակին։ Բրիգադի համար, վորքան կարելի ե, միատեսակ մեքենաներ ջոկել։

## ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ա) ժամանակին պարարտանյութ ստանալ ու հողը պարարտացնել մարտի 1-ից մինչև 20-ը՝ այդ գործը վերջացնելով մինչև արաթի սկիզբը.

բ) առանձին բրիգադներ ջոկել՝ պարարտանյութերը ցանելու համար.

գ) բրիգադի ղեկավարին հրահանգել ագրոկետ-բում։

## ԲՐԻԳԱԴՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ա) դաշտը դուրս գալուց վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ բրիգադներ են կազմակերպվում.

բ) կոլխոզնիկների, լծկանների ու գյուղատնտեսական ինվենտարի քանակությունը սահմանվում ե ամեն մի բրիգադում, նայած մշակման նորմայի, աշխատանքների ծավալին, ու գործը կատարելու համար նշանակված ժամանակին։ Բրիգադներին թե հատուկ գործեր են հանձնարարվում (միայն հերկ, ցաքան),



և թե խառն, նայած ցանքի հողամասի չափին, կայաններից ու մարդաբնակ տեղերից ունեցած հեռավորությունը.

գ) կոլխոզնիկները բրիգադների են բաժանվում՝ նայած իրենց վորակին և այս կամ այն գործին հմուտ լինելուն.

դ) աշխատանքներն սկսելուց յերկու շաբաթ առաջ բրիգադը հաստատուն առաջադրություններ ե ստանում՝ աշխատանքի տեղի ու ժամանակի մասին տրված պատվերներով (նարյադ)։ Բրիգադի ստացած առաջադրությունները քննության են առնվում բրիգադների ընդհանուր ժողովում և բրիգադում յեղած յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքն չափն ե սահմանվում։ Բրիգադը գործնական աշխատանքում պետք ե ձգտի առաջադրությունը գերակատարելու՝ գործադրելով հանդիպական պլանները, սոցիալիստական մրցության ու հարվածայնության մեթոդները, իր վրա վերցնելով հաստատուն աշխատանքային պարտականություններ.

յե) կոլխոզների ժողովներում պետք ե մանրամասնորեն մշակվեն յեկամուտներն ու բերքը բաժանելու կանոնները, վորպեսզի հետագայում յեկամուտն ըստ շնչի բաժանելու վոչ մի խոսք չլինի։ Գարնանացանի իսկական հաջողության գրավական ե հանդիսանում այն, վոր կոլխոզնիկները իսկապես իրականացնեն բերքը բաժանելու կանոնները, միմիայն կոլխոզնիկի ու նրա ընտանիքի կատարած աշխատանքի քանակության ու վորակի համաձայն.

զ) բոլոր դաշտային աշխատանքները գործարքով (գդելնի) են կատարվում։ Ցանքից մի ամիս առաջ՝ կոլ-

խոզի վարչությունը աշխատանքի յուրաքանչյուր միավորի համար (մի հեկտար հերկը, ցանածի ցաքանումը և այլն) գործարքային գնահատում է սահմանում աշխատ-օրով։ Աշխատանքի գնահատումը քննության է առնվում արտադրական խորհրդակցություններում և հաստատվում կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից. այդ գնահատումը կախում են աչքի ընկնող տեղերից և տալիս ամեն բրիգադի։ Բրիգադներին տված պատվերում (նարյադ), անպատճառ պետք է ցույց տալ աշխատանքի գնահատումը աշխատ-օրերով և թե բրիգադն ինչքան աշխատ-օր կստանա կատարած աշխատանքի համար։ Յեթե բրիգադում զանազան վորակի գործիչներ կան, վոր զանազան գործեր են կատարում, նրանց համար աշխատանքի գնահատման չափ է սահմանվում յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքի աշխատ-օրով.

ե) բրիգադի աշխատանքը ղեկավարելու համար՝ վարչության կողմից բրիգադիրներ են նշանակվում ավելի ակտիվ, սոցմրցության ու հարվածայնության կողմից առաջավոր, հանդիպական պլանների նախաձեռնող փորձված կոլխոզնիկներից։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ, ԴԻՍՑԻՊԼԻՆԱ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Կոլխոզի վարչությունը հսկողություն է կազմակերպում—

ա) առանձին բրիգադների՝ իրանց աշխատանքը ժամանակին կատարելու համար, ստուգում է աշխատանքի վորակն ու կազմակերպում բրիգադիրներից աշխատանքն ընդունելու գործը.



բ) դաշտ դուրս գալուց յերկու շաբաթ առաջ՝ կատարած գործի վորակն է սահմանվում,—հերկի խորությունը, ցանքի կանոնավորությունը և այլն)։

գ) հերկի, ցաքանի ու ցանքի թերությունների համար նյութական պատասխանատվություն, ազդելու հասարակական միջոցներ, տույժի չափեր սահմանել.

դ) ճշտիվ բամբակային ցանիչներ սահմանել ցանման վորոշ նորմայի համար, վորը (նորման) համաձայնեցրած լինի տեղական ագրո-գործիչների հետ.

յե) կոլխոզնիկները, բրիգադիրներն աշխատանքը վերջացնելուց հետո՝ պատվերը կատարելու և յուրաքանչյուր կոլխոզնիկի արած գործի գումարն են տալիս, օրինակ վերցնելով լավագույն կատարումներն, անխնա մերկացնելով աշխատանքի վորակը վնասողներին.

զ) բրիգադները բաժանել վարչության անդամների միջև, վորպեսզի անմիջական կերպով ղեկավարեն ու հետևեն գործին, ինչպես և պարբերաբար հաշիվ տան բրիգադներին՝ թե կոլխոզի պլանն ամբողջությամբ վերցրած՝ ինչպես է կատարվում.

է) յուրաքանչյուր կոլխոզում պրեմիայի ֆոնդ սահմանել, պրեմիա տալու լավագույն գործիչներին ու բրիգադներին, վորոնք գերակատարել են առաջադրությունները՝ աշխատանքի լավագույն վորակ տալով։ Ղեկավար և ավելի պատասխանատու աշխատանքի համար հարվածային կոլխոզնիկներ առաջ քաշելու գործը կազմակերպել.

ը) կոլխոզում աշխատանքի խստագույն դիսցիպլինա, ճշգրտություն և հանձնված աշխատանքի համար յուրաքանչյուրի կողմից պատասխանատվություն,

ինչպես և աշխատանքի ժամանակ կոլխոզնիկների կանոնավոր դասավորում սահմանել։ Լայնորեն կիրառել աշխատանքի քննությունն ու քննադատությունը՝ աշխատանքից ազատ ժամանակ։ Բրիգադներում պարտավորեցնել կոլխոզնիկներին՝ աշխատանքի ժամանակ ճշտիվ կատարել բրիգադիրների կարգադրությունները.

թ) պարտավորեցնել Ռայկոլխոզմիություններին հսկողություն և ստուգում կազմակերպելու, թե գործնականում ինչպես են կատարվել աշխատանքային դիսցիպլինան ամրապնդող միջոցառումները, աշխատանքի գործարքային կարգը՝ մշակման նորմաների հիման վրա։ Կոլխոզնիկների շարքերում մասսայական բացատրություններ տալ, վոր յեկամուտները պետք է բաժանվեն բացառապես կատարած աշխատանքի քանակության ու վորակի, և իրանց հասանելիք աշխատաօրերի համեմատ։

ժ) Ռայկոլխոզմիությունները պարտավորվում են կոլխոզնիկների փոխադարձ օգնություն կազմակերպել։ Ավելի ապահովված լավագույն կոլխոզները պետք է վոչ միայն կազմակերպչորեն, այլ և արտադրականորեն օգնություն ցույց տան ավելի թույլ կոլխոզներին (աշխատանքի ժամանակ ազատ լծկան ու. ինվենտար տալ և այլն), դրա համար ավելի լայնորեն գործադրելով հասարակական բուկսիրն ու հասարակական օգնության մյուս ձևերը.

ժա) կոլխոզների վարչությունը յուրաքանչյուր հնգօրյակ Ռայկոլխոզմիությանն ու գյուղխորհրդին բամբակի արտադրական ցանքի չափն է հայտնում։



БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

## ԱՐՏԵԼԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ

ա) դաշտային աշխատանքների ժամանակ, կոլխոզնիկների վորոշմամբ, կամավոր կերպով արտելային սնունդ է կազմակերպվում դաշտում՝ կոլխոզնիկների մտցրած մթերքներից։ Յուրաքանչյուր բրիգադի, կամ հարևանությամբ աշխատող մի քանի բրիգադների համար մի կոլխոզնիկ-արտելշչիկ է ջոկվում, վորի վրա է դրվում սնունդը կազմակերպելու, մթերքները ժամանակին տեղ հասցնելու և պահելու ինչպես և ամանեղենի կողմից ապահովելու գործը.

բ) գործերն սկսելուց վոչ ուշ քան յերեք շաբաթ առաջ՝ պետք է սպառողական կոոպերացիայի հետ պայմանավորվել բրիգադներին առաջին անհրաժեշտության ապրանք (շաքար, թեյ, ծխախոտ և այլն) ծախելը կազմակերպելու՝ աշխատանքի ամբողջ տևողության ժամանակ։

Կոլխոզցենտրի վարչությունը վճռականորեն պահանջում է բոլոր կոլխոզներից և կոլխոզմիություններից, վոր յուրաքանչյուր կոլխոզնիկ իմանա, թե միայն նա, ով կաշխատի, միայն նա պետք է մասնակցի յեկամուտներին ու բերքը բաժանելուն՝ համապատասխան իր կատարած աշխատանքի քանակի ու վորակի։ Յեկամուտներն ու բերքը բաժանելու և աշխատանքը կազմակերպելու կանոնների մասին Խորհրդային Միության Կոլխոզցենտրի 1931 թվի վորոշման համաձայն՝ յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքը պետք է բացառապես աշխատա-օրերով գնահատվի։

*Կոլխոզցենտրն առաջարկում է բոլոր կոլխոզնիկներին առանձնապես ուշադրությամբ հետևելու այդ կանոնները կատարելուն, և ամեն անգամ, յեթե վորևե մեկը փորձի խախտելու այդ կանոններն, այդ մասին անհապաղ հաղորդել հողային ու կոլխոզային վերին որգաններին ու մամուլին։*

**ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈԼԽՈԶՑԵՆՏՐ**

ՊԵՏ. ԿԵՆՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0280621

19.122

32-К
391

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР